ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920 - 1940-ԱԿԱՆ ԹԹ)

Սամվել Մկրտչյան

Ըստ Հայոց եկեղեցական տոնացույցի, Ս. Սարգսի[1] տոնը նշվում է Քրիստոսի Հարությունից կամ Մեծ Զատկից 63 օր (ինը շաբաթ) առաջ՝ շաբաթ օրը (Առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը): Տոնն ունի 35 օրվա շարժականություն և կատարվում է հունվարի 18-ից մինչև փետրվարի 23-ի ժամանակահատվածում[2]:

Սարգիսը հռչակված է ոչ միայն հայոց մեջ: Պարսիկ քրիստոնյաները նրան կոչել են «անհաղթ վկա պարսից և կատարող բոլոր խնդրվածքների»[3]:

Հայոց քրիստոնեական ծիսաշարում պատվավոր տեղ գտած այդ տոնը ծագմամբ շատ ավելի հին է[4]:

Սարգիսը (որը հայտնի է Սուրբ Սարգիս զորավար, տեր Սերգիոս և այլ անվանումներով) օժտված էր «արագահաս», «բարեխոս» և «շնորհատու» հատկանիշներով[5]:

---

[1] Հայոց ավանդական կենցաղում շատ տարածված էր «Սըփ Սարքիս» անվանաձևը:

[2] Վարքագրական աղբյուրների և դրանց հիման վրա կատարված տոմարական հաշվարկների համաձայն՝ Ս. Սարգսի նահատակությունը տեղի է ունեցել 361 թ. հունվարի 31-ին:

[3] Սուրբ Սարգիս, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան (ՔՀ), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2002, էջ 896:

[4] Կան տեսակետներ, որ Ս. Սարգիսը եղել է գարնան պաշտամունքի հայկական մարմնավորում, ուր քրիստոնեական սրբի կերպարի տակ պահպանվել է Արա Գեղեցիկի հուշը: Իսկ վերջինս արտահայտել է երիտասարդության, սիրո, երջանկության և ընտանիքին առնչվող խորհուրդներ (տես **Գ. Ղափանցյան, Ա**րա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 46-64, 88, 107: **Ն. Ադոնց,** Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 289-292):

[5] Ըստ Կիրակոս Գանձակեցու, Ս. Սարգիսը նեղյալների, անարդար բանտարկվածների, հայ գերիների հովանավորն է, իսկ նրա գլխավոր սրբավայրը Գագա վանքն է (տես **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց Պատմություն, Երևան, 1982, էջ 181: **Ս. Կարապետյան,** Հյուսիսային Արցախ, գիրք Զ, Երևան, 2004, էջ 440-445):

Սարգսին առնչվող պատմական իրադարձություններն արտացոլվել են ավանդապատումներում, ծեսերում և հավատալիքներում: Դրանց հիմքում մեծ մասամբ ընկած են հավատքի և ազգի պաշտպանության համար թշնամական ոտնձգությունների դեմ ուղղված Սարգսի հերոսական կռիվները: Ըստ ավանդության, Ս. Սարգիսը քաջ և ազնիվ զորավար էր, որը միշտ օգնում էր խեղճերին ու անմեղներին՝ միաժամանակ պատժելով չար մարդկանց: Այս առումով ուշագրավ է հայ եսիրների (գերիների) ազատագրումը Սարգսի կողմից Հուլիանոս ուրացողի և պարսից թագավորի ճիրաններից:

Տարածված էին ուխտագնացությունները. Սրբի անունով կային բազում բնակավայրեր և ուխտավայրեր[1], որոնք տիպային առումով տարաբնույթ են (եկեղեցի, վանք, մատուռ, մենաստան, բերդ, գյուղ, լեռ, գետ, աղբյուր, բլրակ և այլն)[2]:

Տոնի նվիրական ուտեստը փոխինդն ու խաշիլն էին, որոնց գործածությունը նախընթաց հինգ օրերի ընթացքում արգելվում էր: Ամենուր պասի ուրբաթ երեկոյան փոխինդ էին պատրաստում և դրանով իսկ պասը լուծում կամ թաթախվում[3]:

Առաջավորաց պասն սկսվում էր Ս. Սարգսին նախորդող երկուշաբթի օրվանից: Այն ուներ իր ծիսական ուտեստը, և պատահական չէ, որ կենցաղում այդ պասը հայտնի էր նաև «խաշիլի պաս» անվամբ[4]:

Տոնն առանձնանում է երիտասարդության բախտագուշակության ծեսերով: Ուրբաթ երեկոյան երիտասարդներն աղի բլիթներ էին ուտում գիշերը երազ տեսնելու ակնկալիքով: Յուրաքանչյուրը հավատում էր, որ այդ գիշեր երազում ծարավը հագեցնելու նպատակով ջուր տվողն անպայման կդառնա իր կյանքի ընկերը[5]:

---

1 **Հ. Սարգսյան,** Պատմական Հայաստանի Սուրբ Սարգիս սրբավայրերի տեղաբաշխման որոշ հարցեր, «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 103-105:

2 **Հ. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 103-105:

3 **Քաջբերունի**, Հայկական սովորութիւններ, ԱՀ, գիրք VII-VIII, տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1901, էջ 119-120:

4 **Ե. Լալայեան,** Զանգեզուր, ԱՀ, գիրք Դ, № 2, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի և Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1898, էջ 107: Գանձակի գաւառ, ԱՀ, գիրք Զ, տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1900, էջ 364-365: Ա**դոնց**, նշվ. աշխ., էջ 289:

5 **Քաջբերունի**, նշվ. աշխ., էջ 120:

Ս. Սարգսի ավանդույթներից է նրա անունը կրողների նկատմամբ հատուկ վերաբերմունքը՝ կապված անվանակոչության հետ. նվեր մատուցելը, հատուկ հյուրասիրություն կազմակերպելը, այդ օրը ծնվածին նրա անունով կոչելը և այլն[1]:

***

Խորհրդային կարգերի հաստատմամբ հայոց կրոնա-ավանդական այս տոնը ևս ենթարկվեց հալածանքների:

Այդուհանդերձ այն դեռևս կենցաղավարում էր և հատկապես՝ գյուղական բնակավայրերում[2]:

Մասամբ պահպանվել էին՝ թշնամիների դեմ Սարգիս զորավարի մղած պատերազմների և կարիքավորներին օգնելու վերաբերյալ ավանդազրույցները[3]:

Ժողովուրդը շաբաթ առավոտյան սպասում էր սրբի այցելությանը, որի ապացույցը սկուտեղի մեջ դրված փոխինդի վրա երևացող զորավարի ձիու պայտի հետքերն էին. «Սուրբ Սարգսի տոնին Այգեստան գյուղի կանայք պոտնոցի մեջ խմոր են հունցում և դնում կտուրը: Առավոտյան տեսնում են, որ ոչ պոտնոց կա և ոչ էլ խմորը: Կանայք գյուղում լուր են տարածում, թե «Սուրբ Սարգիսը» խմորը և պոտնոցը տարել է, մինչդեռ պոտնոցը և խմորը գողացել են»[4]:

Պահպանվել էր նաև տոնի նվիրական կերակուրը՝ խաշիլը, որը պատրաստում էին փոխինդից[5]:

Զամուսնացածները նախորդ՝ ուրբաթ գիշեր աղի բլիթներ էին ուտում և առանց ջուր խմելու ծարավ քնում՝ երազում իրենց ապագա նշանածին տեսնելու ակնկալիքով[6]:

Հատկապես հիվանդները, հավատալով Սարգսի զորությանը, սրբա-

---

1 **Ե. Շահազիզ,** Նոր-Նախիջեւանը եւ Ն. նախիջեւանցիք, ԱՀ, գիրք IX, տպարան Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1902, էջ 39:

2 **Նիմանդ,** Եկեղեցական տոներ, Երևան, 1931, էջ 48:

3 **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Հրազդանի շրջան, գ. Քաղսի, 1987 թ., էջ 9-10:

4 **Զ. Մարգարյան,** Սուրբ Սարգսի խմորը մեր գյուղում, Անաստված, Երևան, 1928, № 4, էջ 31:

5 **Նիմանդ,** Եկեղեցական տոներ, Երևան, 1931, էջ 48-51: **Գարեգին**, Տատիս սարքած օյինը, Անաստված, Երևան,1931, № 3, էջ 13: Ս. Սարգսի և տգետ տատիս զոհը, Անաստված, Երևան, 1928, №, 3, էջ 9: **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Քաղսի, էջ 10:

6 **Նիմանդ,** նշվ. աշխ., էջ 50-51:

վայրեր ուխտի էին գնում և մատաղ անում[1]:

Սակայն արդեն տոնին նախորդող մեկշաբաթյա պահքը կամ պասը (Առաջավորաց պասը) շատ քչերն էին պահում, իսկ պաս կամ ծոմ պահողները սովորաբար ձեթ էին օգտագործում[2]:

Ավանդական այս տոնի նկատմամբ բոլշևիկյան հալածանքները նույնիսկ վերածվել էին զավեշտի: Սուրբ Սարգիսը, որը դարեր շարունակ հայոց քրիստոնեական ինքնության խորհրդանիշն էր, որին դժբախտներին կամ կարիքավորներին օգնողի առաքելություն էր վերագրվում, բոլշևիկյան գաղափարախոսական ձևակերպմամբ վերածվել էր նոր դժբախտությունների պատճառի և տարածողի: Այստեղ շատ հստակ երևում էր խորհրդային արժեքային դաստիարակությունը, որի արդյունքում հայ պատանին ազգային կրոնական ավանդույթներն սկսում էր ընկալել որպես տգիտության, կրոնամոլության, խաբեության և հետամնացության դրսևորում:

Վերը նշված երևույթը շատ հստակ արտացոլված է 1920-ականների բոլշևիկյան մամուլի հրապարակումներում.

* «Դեռ մանուկ էի, 7-8 տարեկան: Սուրբ Սարգսի մեծ պասի օրերին, ամբողջ 40 օր տատս մեր հոգին հանեց պաս ու ծոմ պահել տալով: Մի ամբողջ ամիս, բացի մեր գյուղի առատ կարտոֆիլից ու գարի հացից, բերաններս ոչինչ չէինք դնում, իսկ մի քանի օր էլ ծոմ պահելով մեր փորը լցնում էինք առատ սառը ջուր միայն: Տատս շատ կրոնամոլ պառավ էր: Նա մեզ հավատացնում էր, թե մեր օջախը սուրբ է եղել, որովհետև լավ ենք կատարել «սուրբ գրքի» օրենքները: Նա պատմում էր, թե ինչպես մի գիշեր ինքը քնած ժամանակ Գաբրիել հրեշտակը եկել իրեն դուրս է կանչել, տեսել է երկնքից սուրբ հոգին լուսավորված իջել է պապիս գերեզմանի վրա: Մեծ պասի վերջին օրերն էր: Տատս փոխինձ էր արել ու տաշտի մեջ պինդ ծածկել: Գիշերը Սուրբ Սարգիսը սպիտակ ձիով պետք է գա փոխինձը տրորի ու առավոտյան նոր սկսենք խաշիլ եփել: Այդպես էր հավատացնում մեզ տատս: Գիշերը երկար էր, քուններս չէր տանում, օջախը թեժ էինք արել ու նստել: Տատս սկսել էր իր առակներն ու պատմությունները: Նա պատմում էր, թե ինչպես գիշերը հրեղեն լույսով սուրբ

---

[1] Ս. Սարգսի և տգետ տատիս զոհը, Անաստված, Երևան, 1928, № 3, էջ 9:

[2] **Ս. Մկրտչյան,** ԴԱՆ, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, 1986 թ., էջ 3:

հոգին նորից պետք է իջնի պապիս գերեզմանի վրա ու սուրբ պետք է գա սպիտակ ձիով: Խեղճ եղբայրս, որ ինձնից 2-3 տարով էր մեծ, կուլ էր գնացել ստերին, որպեսզի տեսնի սուրբ հոգուն հրեղեն լույսով երկնքից իջնելիս ու սուրբ Սարգսին՝ սպիտակ ձիով, գիշերը մեր քնած ժամանակ մերկ դուրս է գալիս ու ժամերով դռանը քար կտրում, սպասում հա սպասում: Մեր գյուղը լեռնագյուղ է, ցուրտ, սառնամանիք: Առավոտյան, երբ վեր կացանք, տատս բացեց տաշտը ու ցույց տվեց փոխինձի վրա սպիտակ ձիու ոտքի հետքը: Այդ օրվանից եղբայրս անկողին մտավ, դաժան ցուրտը նրան չէր խնայել ու երեխան թոքերի բորբոքում էր ստացել: Գյուղումը պառավ չմնաց, որ բժշկելու չգար, հազար ու մի գիր ու կապ արեցին, բայց եղբորս հիվանդությունը քանի գնում սաստկանում էր ու տաքությունից զառանցում էր, սուրբ Սարգսի ու տատիս պատմած սրբերի անունները տալիս: Պառավները տատիս խելքը մտցրին, որ եղբորս հիվանդությունը սուրբ Սարգսից է, և որպեսզի բժշկվի, պետք է մատաղ տանել սուրբ Սարգսի խաչը, որը մեր գյուղից 5 վերստ հեռու էր, մի բարձր ձյունոտ բլրի վրա: Այդպես էլ արեցին. մի մատաղացու՝ աքլոր վերցրեցին, եղբորս անկողնուց հանեցին և ուղևորվեցին սուրբ Սարգսի խաչը: Դեռ խաչին չհասած, տատս ստիպում է հիվանդ երեխային սառը ձյունի վրա չոքեթաթ աղոթելով մոտենա խաչին: Եղբորս հիվանդությունն ավելի բորբոքվեց ու տուն վերադառնալուց մեկ օր հետո դեռ մատաղ հասակում վախճանվեց: Միայն մի հատիկ եղբայր ունեի, նրանից էլ զրկվեցի. ծնողներիս մասին տատիցս էի լսել: Անցան տարիներ, տատս վախճանվեց, սակայն վախճանվելուց առաջ նա պարզեց իր գաղտնիքը: Մեր փոխինձի վրա պայտի հետքը կեղծել էր տատս, գիշերը մեր քնած ժամանակ, իսկ խեղճ եղբայրս կրոնամոլ-տգետ տատիս զոհ դարձավ»[1]:

* «Տատիկս փոխինձ պատրաստելիս ցորենն աղում էր, ածում սինի կոչված մի ամանի մեջ, չորս կողմը մոմեր էր վառում և դնում մեր տան խոր ու մութ անկյուններից մեկում: Ինձ, որպես մանուկի, շատ էր հետաքրքրում այդ խորհրդավոր ծիսակատարությունը: Երբ դեռ շատ էի փոքր, տատիկս ասում էր՝ «հետո կիմանաս», բայց հենց որ դառա տասը տարեկան, նորից տատիկիս փեշը բաց չէի թողնում: Մի օր, կարծես, Բարեկենդանին էր, տատիկս նորից փոխինձ էր արել, մոմերը վառել,

[1] Ս. Սարգսի և տգետ տատիս զոհը, Անաստված, Երևան, 1928, № 3, էջ 9:

դրել տան մութ անկյունում: - Դա ինչի՞ համար է տատիկ, հարցրեցի ես: Տատիկս, նախ քիթը գոգնոցով սրբեց և հետո խորհրդավոր ասաց. - Ա՛յ որդիս, էդ նրա համար եմ դնում էնտեղ, որ գիշերը Սուրբ Սարգիսը գա իր ձին նստած, անցնի և աղոթի: - Ուրեմն սուրբ Սարգիսը գալու է մեր տո՞ւն տատիկ: - Գալու է, ձին նստած գալու է կանգնի փոխինձի մեջ, աղոթի, հետո գնա: - Տատիկ, էս գիշեր կարո՞ղ եմ Սարգսին տեսնել: Տատիկս պատասխանում ա.- ա՛յ լակոտ, Սարգիս չի՛, սուրբ Սարգիս ա՛: Ես էլ, տատիկիս ասածը կրկնում եմ:- Այ լակոտ, Սարգիս չի, սուրբ Սարգիս ա: - Վի՛, վի՛, թաղեմ քեզ, էդ ինչ ասացիր: - Տատիկ, բա ինչպե՞ս ես իմանամ, որ սուրբ Սարգիսը եկել է, թե՝ ոչ: - Ձիու ոտի տեղը երևալու ա. հենց որ եկավ, ձիու ոտը դնելու ա փոխինձի մեջ: Այդ գիշերը ես չկարողացա քնել. վերմակս գցել էի գլխիս և սպասում սուրբ Սարգսի գալուն: Լույսը բացվեց, բայց մեր տուն ոչ ոք չեկավ: Տատիկս, որ ինձ հետ էր քնում, վեր կացավ և կարծելով, թե ես քնած եմ, գնաց դեպի փոխինձը: Նա ձեռքի ափը լայն բացավ, պինդ հուպ տվեց փոխինձի վրա: Այդ որ տեսա, տեղիցս վեր թռա, վազեցի դեպի նա ու հետաքրքրությամբ հարցրի. - Տատիկ ո՞ւր է սուրբ Սարգսի ոտի տեղը: - Ա՛յ սա՛ յա - ցույց տալով տատիկս իրա ձեռքի տեղը: Ես իսկույն ծիծաղեցի: - Դա քո ձեռքի տեղը չի՞, տատիկ, հարցրի ու մի քանի քայլ հեռու կանգնեցի: Տատիկս սաստիկ բարկացավ, սպառնաց աստծով, բայց՝ իզուր: Այդ օրվանից սուրբ Սարգիսը ինձ համար տատիկ դառավ, իսկ նրա ձիու ոտի տեղը՝ տատիկիս ձեռքի տեղը»[1]:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920 – 1940 –ԱԿԱՆ ԹԹ.)

Սամվել Մկրտչյան

Բանալի բառեր *- Սարգիս, սուրբ, կրոն, ավանդական, ավանդազրույց, կենցաղ, խորհրդային, ավանդույթ, զորավար, աղանձ, խաշիլ, ձի, պայտ, ուխտ, մատաղ, տոն, հավատալիք, բախտագուշակություն:*

Խորհրդային կարգերի հաստատմամբ հայոց ավանդական այս տոնը ենթարկվեց հալածանքների:

---

[1] **Գարեգին**, Տատիս սարքած օյինը, էջ 13:

Այդուհանդերձ այն դեռևս կենցաղավարում էր և հատկապես՝ գյուղական բնակավայրերում:

Մասամբ պահպանվել էին թշնամիների դեմ Սարգիս զորավարի մղած պատերազմների և կարիքավորներին օգնելու վերաբերյալ ավանդազրույցները:

Տոնի շաբաթ առավոտյան մարդիկ սպասում էին սրբի այցելությանը, որի ապացույցը սկուտեղի մեջ դրված փոխինդի վրա երևացող զորավարի ձիու պայտի հետքերն էին:

Պահպանվել էր նաև տոնի նվիրական կերակուրը՝ խաշիլը, որը պատրաստում էին փոխինդից:

Զամուսնացածները նախորդ՝ ուրբաթ գիշեր աղի բլիթներ էին ուտում և առանց ջուր խմելու ծարավ քնում՝ երազում իրենց ապագա նշանածին տեսնելու ակնկալիքով:

Հատկապես հիվանդները, հավատալով Սարգսի զորությանը, ուխտի էին գնում և մատաղ անում:

Տոնին նախորդող մեկշաբաթյա պասը շատ քչերն էին պահում:

Տոնի նկատմամբ բոլշևիկյան հալածանքները նույնիսկ վերածվել էին զավեշտի: Սուրբ Սարգիսը, որը դարեր շարունակ հայոց քրիստոնեական ինքնության խորհրդանիշն էր, որին դժբախտներին կամ կարիքավորներին օգնողի առաքելություն էր վերագրվում, բոլշևիկյան գաղափարախոսական ձևակերպմամբ վերածվել էր նոր դժբախտությունների պատճառի և տարածողի: Այդ երևույթը շատ հստակ արտացոլված էր ավագ և կրտսեր սերունդների հակադրություններում, որն առավելապես ուներ քաղաքական ենթատեքստ:

ПРОЯВЛЕНИЯ ПРАЗДНИКА СВЯТОГО САРГИСА В СОВЕТСКИЙ ПЕРИОД (1920-1940-Е ГГ.)

Самвел Мкртчян

Ключевые слова *- Саргис, святой, религия, традиционный, сказания, быт, советский, традиция, военачальник, аханд, хашил, лошадь, подкова, паломничество, жертвоприношение, праздник, поверье, гадание.*

После установления советской власти, этот армянский традиционный праздник подвергся гонениям. Тем не менее, он продолжал бытовать особенно в сельских поселениях.

Частично сохранились сказания, относящиеся к войнам военачальника Саргиса против врагов и сказания о помощи нуждающимся.

В субботнее утро праздника люди ждали посещения святого, доказательством чего являлись следы подковы лошади военачальника, видимые на похинде в подносе.

Сохранилось также блюдо данного праздника – хашил, которое изготавливалось из похинда.

Незамужние ели соленую лепешку в предшествующую ночь пятницы и, не запивая водой, засыпали в надежде увидеть своего суженого во сне.

Особенно больные, веря в силу Саргиса, отправлялись в паломничество и приносили жертву.

Однонедельный пост, предшествующий празднику, мало кто соблюдал.

Большевистские преследования по отношению к празднику принимали даже несколько забавную форму. Святой Саргис, который долгие века был символом армянской идентичности, которому предписывали миссию помощника несчастным и нуждающимся, согласно большевистской идеологии был представлен как причина новых бед и виновником их распространения. Данное явление очень четко отображалось в противопоставлениях старшего и младшего поколений, что имело в основном политический подтекст.

MANIFESTATIONS OF THE SAINT SARGIS FEAST IN THE SOVIET PERIOD

Samvel Mkrtchyan

Key words *- Sargis, saint, religion, traditional, stories, everyday life, Soviet, traition, commander, aghandz, khashil, horse, horseshoe, pilgrimage, offering, feast, belief, fortunetelling.*

After establishment of the Soviet regime, this Armenian traditional feast was abolished. Nonetheless, it has continued to exist particularly in village settlements. Some stories have been preserved, concerning the struggles of the commander Sargis against the enemies as well as stories about his assistance to the distressed.

On the Saturday morning of the feast, people waited for the saint's coming, that was evidenced by the traces of his horse's shoe outline on the dish called pokhind laying in the tray.

The main dish of this feast called khashil (flour porridge) was prepared from pokhind.

The maidens ate salty scone on the preceding Friday night and went to bed thursty, without drinking water, hoping to see their intended in the dream.

The deceased people, in particular, having a strong faith in the power of the saint Sargis, went on a pilgrimage and made an offering. A week's fasting, preceding the feast, was kept by a few people.

The Bolshevist persecutions against the feast were also seen as amusing. Saint Sargis, who had been the symbol of the Armenian identity, considered to be the supporter of the unfortunates and poor, was represented as a cause of new troubles and was blamed for the trouble spread according to the Bolshevist ideology. This phenomena was clearly reflected in opposition of the older and younger generations, with mainly political implication.